

ըունիս և ի վանորայս վիճակիս՝ ի բանասիրական խնդիրս, և հրաւիրեալ լինէր ի մեծաշանդէս տօնս եկեղեցականս և արքունականս արտասանել ճառս և ներբողեանս, օրինակ իմն. « ի խորհուրդ Խընդեան և Մկրտութեան Տեառն, ասացեալ ի Թագաւորական քաղաքն ի Սիս » և այլ երբեմն (յամի 1283) « Յաւուրն յորում օրհնեցան ձիաւորք՝ արքայորդիք մեր Հեթում և Թորոս և այլ մանգունք իշխանաց և որք յարքունական սպասաւորացն », բնաբան կարգելով զառաքելականն, « Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է » և այլն. Ալիշան վարդապետ կը յիշէ հարեանցի կերպով Եղնկացւոյն « Յիշատակարանիս » համար ցանկ ժամանակագրականին մէջ (նոյն էջ 556) 1293 թուականին կը ղէն « Հեթում պատէ գթովհաննէս Եղնկացի եկեալն ի Սիս. Անդ զրէ սա զյիշատակարան մեկնութեան քերականին և ընծայէ առ Հեթում »:

Սիսուանի մէջ չենք գտներ, որ Ալիշան վ. ուսկէ և որ զըջէն առեր է Հեթումի գովեստը և Մեկիք Սշրաֆի յարձակումները և այլն, և այս պատճառով բազմահմուտ անձեր, թերութիւն մը կը գտնեն իւր գրութեան մէջ զայս, և երբեմն մէջբերութիւնները ոչ հաւատարիմ կը գտնեն. Արդարեւ իրենց պահանջը մասամբ մը իրենց տեսակէտով կարելի է թերութիւն համարել, քայց բանասիրաց և գրասիրաց համար ընդհանուր առումով՝ ոչ եթէ թերութիւն է չխնդրել և չստուգելացնելը, այլ մանաւանդ հեշտակէ է ընթերցանութեան համար, գիտնալով՝ որ արդէն հմուտ քննադատը ունին այդ վրկայութեանց հաւաքոյթը և պաշարը և աւելորդ է սակաւներու պատճառաւ ըլլալ անախորժ այլոց:

Ո. Կ.

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐԲ Ս. ԲԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

Ս. Ղազարու Վանքին 62 կտոր Հայ Բժշկական ձեռագիրներու մասին կատարած ուսումնասիրութիւններուս հրատարակութիւնը, քանի որ ալ վերջ գտաւ, մեծապէս պարտաւոր կը զգամ զիս իմ խորին շնորհակալութիւններս յայտնել ԲԱԶՄԱՎԷՊ Հանդիսարանի մեծայարգ խմբագրական մարմինն և մասնաւորապէս՝ խմբագրապետ Հ. Ղեւոնդ Վ. Տայեանի, որ երեքուկէս տարի շարունակաբար, (1923 յունուարէ մինչև 1926 յունիս) հիւրընկալ եղաւ իմ փանաքի աշխատութեանս:

Հարկ է ռակայն, որ յետագարձ ակնարկով մը դիտեմ պահ մը այդ հրատարակութիւնները և անոնց մէջէն քաղելով դասաւորեմ՝ ժամանակագրական կարգով՝ խել մը թուականներ ու անձեր, որոնք Հայ Բժշկական Պատմութեան կարեւոր ու նոր էջեր կը օրինեն. այդ դասաւորումը վերջարանը պիտի ըլլայ Վենետիկանէ Հայ Բժշկական ուսումնասիրութիւններուս:

Նախ և առաջ՝ Գրիգոր Նիստացիի « Գիրք քնոթեան մարդոյ » կոչուած աշխատութեան ձեռագիր վեց օրինակներէն հաստատապէս կը ճշդուի, թէ այդ գործը Հայերէնի թարգմանած է Կ. Պոլսոյ մէջ՝ 716ին, Ստեփաննոս Սիւնեցի մեծանուն Եպիսկոպոսը, որ 21 յուլիս 735ին կը վախճանի եղբորական մահուամբ:

990–1020, Արաբերէնէ Հայերէնի կը թարգմանուի այս Բժշկարանը, որ Թագաւոր Գագիկ Ա.ի անունով ճանչցուած է և որ Ս. Ղազարի ձեռագրատան 1281 թուահամարը կը կրէ (դարակ Գ. Դ.).

1263ին, Հեթում Թագաւորի խնդանքով ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԱՐԿԱՍԻՍ Արաբերէնէ Հայերէնի կը թարգմանէ Զիպարմանուրիս մը. (Խմբագիրը 83դ տուի, Թիւ 5):

1284ին, Մխիթար Հերացի Բժշկապետը կը շարադրէ իր « Զերմանց Միւի-

բարոյրիւնը, զոր ընդօրինակած է փառիզի մէջ Հ. Արսէն Բագրատունի, և բերած Ս. Ղազար. (Թուահամար 1436, Բ. Ե.):

1294ին, յունուար 28ին, Երեւոյն վարդ Մրտիչցին, Կոռիկոսի Տէր Հիթում Թագաւորին համար կ'ընդօրինակէ վերոյիշեալ Գագիկ Թագաւորին օրով Թարգմա նուած բժշկարանը. (Թուահամար 1281):

1318ին, Յակոբ Թագորցի, Սիւնեաց աշխարհի Գլածոր համարաւոր մենատանին մէջ կ'ընդօրինակէ Գր. Նիւսացիի «Գիրք բնութեան մարդոյ յն, որ Ս. Ղազարի ձեռագրատան 1128 Թուահամարն ունի (Է. Բ.):

Ձ Դեկտ. 1466–1469, Ամիրտուլվաթ Ամասիացի մեծ բժիշկը Ֆիրիպէի մէջ կը գրէ իւր «Օգոստ բժշկութեան» յը:

1478–1482, Կ. Պուլսոյ մէջ Ամիրտուլվաթ Ամասիացի կը գրէ իւր «Անգիտաց Անպետ» յը:

6 Ապրիլ 1481, Կ. Պուլսոյ մէջ Ամիրտուլվաթ Ամասիացի կը գրէ իւր «Ագրապատիւ» յը:

8 Դեկտ. 1496, կը մեռնի Ամիրտուլվաթ Ամասիացին:

1611, Արարհամ Կ. Պուլսեցի կը գրէ «Կենդանաբնութիւն» յը (Թիւ 1418, Ե. Բ.):

30 Հոկտ. 1617ին Իւովի մէջ՝ Սարգիս Քէօթահիացի կ'ընդօրինակէ Ապուսայիտի Մարդակագմութիւնը, որ Ս. Ղազարի ձեռագրատան 968 Թուահամարն ունի (Դ. Դ.):

18 Դեկ. 1618–17 մարտ 1619, Իւովի մէջ՝ Գր. Տօմաթիւրեցի կ'ընդօրինակէ Գր. Նիւսացիի «Գիրք բնութեան մարդոյ յն, որ Ս. Ղազարու Բ. օրինակն է, և կը կրէ 56 Թուահամարը (Ա. Դ.):

25 Օգոստ 1621, Յովհաննէս վարդապետ Կ. Պուլսեցի (Հովով) կը Թարգմանէ Հոմերի մէջ, Ճօնապաթիւթ փոսթայնոյի քնազնութիւնը, ուրկէ երկու օրինակ կայ Ս. Ղազարի մէջ, մին 34 Թուահամար (Ը. Է.), միւսը 993 Թուահամար (Գ. Զ.):

1647ին. Վանի Ս. Լէւոնտին եկեղեցիին մէջ Դպիր Սաֆար կ'ընդօրինակէ բժշկարան մը 1355 Թուահամար (Ա. Բ.):

1655ին կը ծնի Սահակ բժիշկ Պոնտացի, հայր Մանուկ բժիշկ Պոնտացի:

1656ին Արարհամ մեղաւոր գրիչ կ'ընդօրինակէ Գր. Նիւսացիի «Գիրք բնութեան մարդոյ յն, որ է Գ. օրինակը Ս. Ղազարու. (Թուահամար 1241, Ե. Գ.):

4 Ապրիլ 1662ին կ'ընդօրինակուի՝ յայտնի չէ թէ ո՛ր և ո՛րի ձեռքով Ամիրտուլվաթի «Անգիտաց Անպետ» յը, որ նուէր է Տիւգիան Յակոբ Չէշեպու և կը կրէ 1243 Թուահամարը (Ը. Դ.):

1668. Գրիգոր բժիշկ Մատուրեան կ'ընդօրինակէ Ամիրտուլվաթի «Անգիտաց Անպետ» յը, որ ձեռագրատան 35 Թուահամարն ունի (Ը. Ե.):

1671 Նոյեմ. Մեհարուկ Գրիչ կ'ընդօրինակէ Ապուսայիտի «Մարդակագմութիւնը» (Թուահամար 1326, Ը. Ա.):

26 Դեկտ. Կեփուս անուն բժիշկը կ'ընդօրինակէ «Մարդակագմութիւն» մը, որ 1431 Թուահամարն ունի (Ը. Դ.):

9 Օգոստ. 1688, Աստուածատուր Երէց, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կ'ընդօրինակէ Ապուսայիտի «Մարդակագմութիւնը» և Ասար բժիշկին երկը. (Թուահամար 717 Ը. Գ.):

1708ին Մինաս բժիշկ՝ որդի Տէր Յովհաննէսի, կը գնէ վերոգրեալ Մատուրեան Գրիգոր բժիշկին 1668ին ընդօրինակած բժշկարանը:

13 Դեկտ. 1722. Քէտէմէր գիւղի մէջ բժշկութիւն ընող կաղ Աննա դահեկ Զոյա տէճանի գիտածնեքը գրի կ'առնէ Նոյն տեղի Բահանայ Տէր Գրիգորը (Ձեռագիր 1331, Թուահամար 2. Ե.):

1723ին Սեբաստիոյ մէջ Կիրակոս անուն զպիր մը կ'ընդօրինակէ Ամիրտուլվաթայ գործերը, այն քաղաքին մէջ ապրած բժիշկ Ղազար Տէր Գրիգորեանի համար. երկու հատորէ կը բաղկանայ. առաջինը 1712 և երկրորդը 1713 Թուահամարով (Զ. Ե.):

1730ին Բժիշկ Ստեփան, որ է որդի

վերև յիշուած Մինաս բժիշկին, տէր կ'ըլլայ 1668ին ընդօրինակուած բժշկաբանին. այս Ստեփանն ալ բժիշկ զաւակ մը կ'ունենայ Մատուր անուն:

31 Օգոստ. 1753. Պատրայի մէջ՝ Զուգայի առաջնորդ Գէորգ վարդապետ Յովհաննէսեան կ'ընդօրինակէ Գր. Նիւսացիի «Գիրք թնութեան Մարդոյ»ն, որ Ս. Ղազարու Դ. օրինակն է և կը կրէ 294 թուահամարը (Գ. Բ.):

28 Օգոստ. 1756. Զմիւռնիոյ Առաջնորդ Մինաս Արքեպիսկոպոս Ս. Ղազարու վանքին կը նուիրէ բժշկարան մը, որ է Ամիրտովվաթի աշխատութիւնը. կը կրէ 491 թուահամարը (Բ. Դ.):

1757ին Մատթէոս անուն բժիշկ մը՝ թերևս Կ. Պոլսոյ մէջ ծախու կ'առնէ Ամիրտովվաթի «Անգիտաց Անպետ քին մէկ օրինակը, որ» 1799ին սեպտականութիւնը կ'ըլլայ Ս. Ղազարու. ունի 259 թուահամար (Է. Զ.):

1757ին Մանուկ բժիշկ Պնտաացի, որդի Սահակ բժիշկ Պնտաացւոյ, կը գրէ «Մարդակոզմոքիւն» մը Քաֆայի մէջ. (թուահամար 839 Դ. Դ.):

1 Օգոստ. 1757ին. նոյն բժիշկը ուրիշ բժշկարան մ'ալ կը գրէ Քաֆայի մէջ, (թուահամար 1768 Դ. Ը.):

1759ին Սահակ բժիշկ պոնտացի Քաֆայի մէջ կը գրէ իր «բժշկարանը» (թուահամար 1353 Ե. Դ.):

1763 Նոյեմբ. Նոյն բժիշկը 68 տաւելակ եղած ատենը Եւզոկիոյ մէջ կը գրէ երկրորդ բժշկարան մը, (թուահամար 538, Ե. Դ.):

14-24 Հոկտ. 1772. Ստեփանն քաւտուղար Կ. Պոլսեցի կ'ընդօրինակէ Հոլով Յովհ. վարդապետին 1621ին թարգմանած թնագնոտրեան:

20 Ապրիլ 1773. Վան քաղաքին մէջ խնդ Պետրոս անուն անձ մը կ'ընդօրինակէ բժշկարան մը, զոր սեպտականած է Հ. Ե. սայի Տպեցիի:

9. Նոյեմ. 1779. Բէթրօ բժիշկ Յաւրութիւնեանի եղբայրը Դադատիոյ մէջ զբարարէ Կաշարհաբարի կը թարգմանէ,

նախապէս Լատիներէնէ զբարարի թարգմանուած «Կրթորիւն բժշկորեան» զորմը, որ ունի՝ (թուահամար 21 Ը. Է.):

3 Յունվար 1781. Շոտթեցի Ռափայէի եղբայր, Հ. Սուքիաս վարդապետ, Ս. Ղազար կը բերէ Գրիգոր Նիւսացիի «Գիրք թնութեան Մարդոյ»ն մէկ օրինակը, որ ձեռագրատան 57 օրինակն է և ունի՝ (1129 թուահամարը Զ. Դ.):

1 Յունվար 1785. Վասպուրականցի Նոտար Յարութիւն Կ. Պոլսոյ մէջ կ'ընդօրինակէ Սիմէոն բժիշկ Կամարկապցիի աշխատասիրութիւնը, որ ունի՝ (թուահամարը 1320 Է. Զ.):

4 Ապրիլ 1790. Հ. Միքայէլ վ. Զամչեանի ձեռքով, Պաշտպալովցի Յովհաննէս Զիգիեան Ս. Ղազարու կը նուիրէ Ապուսայիտի «Մարդակոզմոքեան» մէկ օրինակը, որ 276 թուահամարն ունի և կը գտնուի (Դ. Ա.):

8 Հոկտ. 1790. Հ. Ղուկաս վ. Ինճիհեան Կ. Պոլսէն Ս. Ղազար կը տանի Ամիրտովվաթայ «օգոստ բժշկորեան» երկին մէկ օրինակը, որ ունի 1285 թուահամարը (Է. Զ.):

1791. Տփլիսեցի Ստեփանն բժիշկ Շահրիմանեան կը գրէ՝ իր «Անգիտաց ժանտախտ» զորմը. (Թիւ 61 Զ. Ե.):

24 Օգոստ. 1799. Մխիթարեան Հայրեր Կ. Պոլսէն Ս. Ղազար կ'ուղարկեն Ամիրտովվաթի «Անգիտաց Անպետ քին մէկ օրինակը, զոր ընդօրինակած էր 1757ին Մատթէոս անուն բժիշկ մը. (տե՛ս վերև):

19 Օգոստոս 1800. Արեւիկեցի Կրասնոսի որդի աւագ սարկաւագ ձեռնասիր Սիւրուն Պապա տէր կ'ըլլայ, Հոլով Յովհաննէս վարդապետին 1621ին թարգմանած թնագնոտրեան, որոնք թուահամար ունին (34 և 933, Ը. Ե. Դ. Զ.):

1 Յունվար 1816ին. Ռափայէլ Խոնտախճեան տէր կ'ըլլայ՝ 1647ին Վան քաղաքին մէջ Դպիր Սաֆարի ընդօրինակած բժշկարանին, (տե՛ս վերև):

1824. Հ. Արսէն Բազրատունի Բարիզի մէջ կ'ընդօրինակէ Մխիթար Հեռացի

բժշկականին «Ջերմանաց Միխրարոսրիան»ը.
(Թուահամար 1436 Բ. Ե.):

15 Յունիս. 1825. Հ. Արսէն Բագրա-
տունի Բարիգի մէջ կ'ընդօրինակէ «Բառք
Գաղղիանսիան և կը բերէ Ս. Ղազար նա-
խորդ ձեռագրին հետ. (Թուահամար 680
Գ. Ե.):

26 Դեկտ. 1826. Տիգրան Յակոբ
Չէլէպի Ս. Ղազարի կը նուիրէ վերոյի-
շխալ 1243 Թուահամարը կրող և 1662
Ապրիլ 4ին ընդօրինակուած Ամիրտուլվաթ
բժիշկին «Անգիտաց Անպետ»ը (տե՛ս վերև):
Հետը նաև 1618 Թուահամար բժշկարանը:

1829. Միսաքեան Ստեփան աղա կիւ-
րեղ անուն անձի մը նուէր կու տայ,
կեփաս բժիշկին 1683ին ընդօրինակած
«Մարգարակաճոսրիան»ը. (տե՛ս վերև):

1832. Վենետիկ Միքիթարեան սպա-
րանէն լոյս կը տեսնէ Միքիթար Հերացիի
«Ջերմանաց Միխրարոսրիան»ը, զոր Հ.
Արսէն Բագրատունի ընդօրինակած էր
1824ին:

28 Յունիս 1843. Կը յիշուի «Կիրեղ»
անուն բժիշկ մը:

Հոկտ. 1844ին Բերայի մէջ Անտոն
Վարժապետ Տիտեան քէօլէհանց, կ'ընդ-
օրինակէ Ստեփան բժիշկ Շահրիմանեանի
1791ին շարադրած «Անգիտաց Ժանտախ-
տի»ն, տե՛ս վերև:

1867ին Մեծանուն Բժիշկ Յարութին
Պէտան Պէյ Ս. Ղազարի կը նուիրէ Ա-
միրտուլվաթի «Անգիտաց Անպետ»ին մէկ
ձեռագիրը, որ ունի 138 Թուահամարը
(Գ. Բ.):

16 Օգոստ. 1885. Բերայի մէջ, Աւ-
տիս Ղարոյեան կ'ընդօրինակէ՝ կաղ Աննա
դահեկին 1722ին շարադրած բժշկարանը
(տե՛ս վերև):

Սոյն ժամանակագրական ցուցակէն
կ'ուսանինք անունները կարգ մը գրիչնե-
րու, որոնց երախտագէտ է յաւէտ Հայ
Բժշկական Պատմութիւնը, որովհետև ա-
ռանց անոնց համբերատար աճութիւննե-
րուն, շատ մը բժշկարաններ կորուստի
մատնուած պիտի ըլլային: Կ'ուսանինք
նաև թէ 17րդ դարու մէջ ունէինք ՍԱՀԱԿ

ՊՈՆՏԱՅԻ, ԳԻԳՈՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ և ԿԵՓԱՍ
Բժիշկները, իսկ 18 դարուն ալ՝ ՄԻՂԱՍ
ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ԱՆՆԱ ՉԻՏՏԷՄԵԱՆ,
ՂԱԶԱՐ ՏԷՐ ԳԻԳՈՐԵԱՆ, ՍՏԵՓԱՆ ՄԻՆԱ-
ՍԵԱՆ, ՄԱՏԹԷՍ, ԿԻՐԵԼ, ՄԱՆՈՒԿ ՊՈՆ-
ՏԱՅԻ, ԲԷԹՐՈ ՅԱՐՈՒԹԻԿԵԱՆ, որոնք
Միքիթար Հերացիի և Ամիրտուլվաթ ու
Ասար Սեբաստացիի գործերովը անած և
ուսած իրենց միջավայրերուն մէջ քաւա-
կան լաւ բժշկութիւն ըրած ու նաև գրաւոր
երկեր թողած են:

Փարիզ 1926 Յուլիս 17

ՏՕՐԹ. ՎԱԼԵԱՐ Գ. ԹՈՐԳՈՐԵԱՆ

Գ Բ Ա Կ Ա Ն

«ՆԵՐՔԻՆ ՄԵՋԵԱՆԸ»

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏՈՒՔԵՐ

Ա.

Հիւսուածքին մէջ երբեքներանց լուռ ժամերուն
ի՛նչ մտաբաւ թելիւր անցան զաղտնօրէն
Այս վայրկեանին համար ծագկած մատնեքն
ի՛նչպէս լարերը քրնարի մը թրթռուն...

Ի՛նչ լոյսերէ առէ՞նք որք իր հոգւոյն
ի՛նչան երբեք իրենց խորոնկ արևն
Այս բերկրանքին համար ուր դեռ կ'օրօրեն
Սիրաքս յուշերն ուր նոր պատկերն է տօգոյն...

Ա՛հ, ի՛նչ կորուստ, անձանթ մասը կեանքին,
Որմէ թերևս պիտի չառնեմ ժպտագին
Անդրադարձող տեսիլք մը որ պիտի ըլլայ

Կախարդանքի չափ գեղեցիկ. և անոր
Պիտ՝ յառէին աչքերս հոգւոյս հետ խաւար՝
Թախանձագին կարօտի մէջ հեռաւոր...

Բ.

Ի՛նչ արուեստ, ի՛նչ գաղտնիք, անհուն շարժումով
Գիծերու մէջ ընդգոգել պահն առաջին՝
Երբ հոգիին թևերուն վրայ միջոցին
Համբոյրն իջաւ արևներու պէս գինով...

Եւ ունկնդրել ձայներուն որ լըռեցին
Գուցէ հազար շրթներու վրայ մարելով